



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

« 04 » դեկտեմբերի 2019թ. N^o 034/02- 1558

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան,

Համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի 06.06.2017թ. թիվ 101/107.3/2752-17 գրության, կից ներկայացվում է Սպիտակ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 6-ին ժամը 12:00-ին կայանալիք արտահերթ նիստի օրակարգի նախագիծը:

Միաժամանակ, համաձայն ՀՀ Լոռու մարզպետի 04.05.2018թ. թիվ 101/107.3.1/2663-18 գրության, տրամադրվում է տեղեկացում նիստի անցկացման վայրի և ժամանակի վերաբերյալ:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Ա. Գյուլագյան

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 6-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Սպիտակ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 90-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից ուղղակի վաճառքով օտարելուն համաձայնություն տալու և ուղղակի վաճառքի գին սահմանելու մասին

3. Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 60-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

4. Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 61-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

5. Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 61-Ա որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին

6. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկի և Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 61-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

7. Սպիտակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 62-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

8. Սպիտակի համայնքային ենթակայությամբ նախադպրոցական ուսումնական հաստատությունում դաստիարակի թափուր հաստիքի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու մասին

9. Սպիտակ համայնքի սանիտարական մաքրման սխեման և աղբահանության իրականացման կարգը հաստատելու մասին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՏԵՂԵԿԱՅՈՒՄ

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակումների վերաբերյալ

Հ/Հ	Համայնք	Միջոցառում	Օրը	Ժամը	Վայրը
1	Սպիտակ	Սպիտակ համայնքի ավագանու արտահերթ նիստ	06.12.2019թ	12:00	Սպիտակի համայնքապետարանի նիստերի դահլիճ ք. Սպիտակ Շահումյան 7

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ
Digitally signed by SAHAKYAN GAGIK
3707650340
Date: 2019.12.04

Կատ. Ա. Գյուլագյան